Կին և քաղաքականությունը

2012 մարտ

Անվճար հավելված

Հանուն «ընտանեկան արժեքների». պահածոյացնենք կանանց աշխարհընկալո՞ւմը

էջ 2

Փաստաշար



Ողջ աշխարհում յուրաքանչյուր 5 պատգամավորներից մեկը կին է

Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով՝ կանանց ներկայացվածությունն աշխարհի խորհրդարաններում միջինը կազմում է 19,5 %, ինչը նշանակում է, որ ամբողջ աշխարհում առնվազն յուրաքանչյուր 5 պատգամավորներից մեկը կին է:

Խորհրդարաններում կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը՝ 42%, Հյուսիսային Եվրոպայի երկրներում է, ԵԱՀԿ երկրների միջին ցուցանիշը 22,6% է: Կանանց խորհրդարանական մասնակցության ամենացածր տոկոսն արաբական աշխարհի երկրներում է՝ ընդամենը 11,3%:

Հայաստանի Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը 8,3% է:

Քվոտաներն ակնհայտ դրական են ազդել

«Կանայք քաղաքականության մեջ 2012» Միջխորհրդարանական միության և «ՄԱԿ-կանայք» կառույցի համատեղ զեկույցում նշվում է, որ 59 երկրներից, որտեղ անցյալ տարի ընտրություններ են անցկացվել, 17-ում գործել են քվոտաներ: Այդ երկրներում կանայք զբաղեցրել են խորհրդարանական տեղերի 27%-ը, այն դեպքում, երբ քվոտաներ չկիրառող երկրներում նրանք ընդամենը 16% են:

ԱԺ չորրորդ գումարման կանայք

2007-ին խորհրդարանի կազմում ընդգրկվեց 12 կին (այժմ՝ 11-ն են):

Խմբակցությունների կազմում՝

- «Ժառանգություն» – 7 պատգամավորից 3 կին (42,8%)
- Հայ հեղափոխական դաշնակցություն – 16 պատգամավորից 3 կին (18,7%)
- «Օրինաց երկիր» – 8 պատգամավորից 1 կին (12%)
- «Բարգավաճ Հայաստան» – 25 պատգամավորից 2 կին (8%)
- Հայաստանի հանրապետական կուսակցություն – 63 պատգամավորից 2 կին (3,21%):

Հասարակությանն անհայտ պատճառներով մանդատներից հրաժարվեցին տարբեր կուսակցությունների ցուցակներում ընդգրկված առնվազն 8 կին՝ զիջելով իրենց տեղը տղամարդկանց:

Ձայն բազմաց

«Ձեր կարծիքով՝ քանի՞ կին պետք է լինի Ազգային ժողովում»

Հարցվածների 85,5%-ն այս հարցին պատասխանելիս կողմնորոշվել էր 20-50% չափաբաժնի օգտին, ինչը վկայում է հասարակության սպասումների և ԱԺ-ում կանանց իրական ներկայացվածության խիստ անհամապատասխանության մասին: Հարցվածների միայն 14,5%-ն էր գտնում, որ կանայք խորհրդարանում պետք է 10%-ից պակաս լինեն, այսինքն՝ այնքան, որքան կին պատգամավոր կա գործող գումարման կազմում: Հարցմանը մասնակցել է 1300 մարդ:

Ըստ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի՝ 2008-ին Հայաստանի բոլոր մարզերում անցկացրած հարցման արդյունքների

Քանի՞ կին են ներկայացրել կուսակցություններն իրենց ցուցակներում

«Բարգավաճ Հայաստան»	21,8%
«Ժառանգություն»	24,6%
«Հայ ազգային կոնգրես» դաշինք	20,3%
Հայ հեղափոխական դաշնակցություն	31,7%
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	24,4%
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	21,1%
Հայաստանի հանրապետական կուսակցություն	21,3%
«Միավորված հայեր»	37,9%
«Օրինաց երկիր»	20,2%

Ընտրական խոհանոց

Մի քայլ առաջ, երկու քայլ հե՞տ

Քանի՞ կին կլինի Հայաստանի նոր՝ հինգերորդ գումարման Ազգային ժողովում: Այսօր այդ հարցին ոչ ոք չի կարող պատասխանել, նույնիսկ ընտրողը, որին, ինչպես հայտնի է, պատկանում է վերջին խոսքը: Ընդամենը կարելի է որոշակի եզրահանգումներ անել՝ դիտարկելով կուսակցությունների ներկայացրած ցուցակները և մեծամասնական ընտրատարածքներում առաջադրվածների ցանկը: Իհարկե, վերջնական գրանցման փուլում դեռ շատ բան կարող է փոխվել, սակայն փորձը ցույց է տալիս, որ կանանց մասնակցության հարցում չարժի կտրուկ փոփոխություններ սպասել:

Սկսենք կուսակցություններից: 2007-ին, երբ ընտրական օրենսգրքում գործում էր կանանց ներկայացվածության վերաբերյալ 15%-անոց քվոտան, կուսակցություններն իրենց ցուցակներում ընդգրկեցին միջինը 22,6% կին: Այս անգամ, երբ օրենքում ամրագրված է 20% գենդերային քվոտա, ԿԸՀ ներկայացված կուսակցական ցուցակներում միջինը նույն 22,8%-ն է: Դա նշանակում է, որ այս պահին հնարավոր չէ որևէ կանխատեսում անել նոր Ազգային ժողովում կանանց թվի ավելացման վերաբերյալ:

Ժամանակին, երբ խորհրդարանում քննարկվում էին ընտրական օրենսգրքի փոփոխությունները, և կանանց հասարակական կազմակերպություններն առաջարկում էին բարձրացնել քվոտան մինչև 30-40% կամ էլ առաջնորդվել արդարության սկզբունքով, այսինքն՝ 50/50 բանաձևով, պատգամավորներն ընտրեցին «կամաց գնաս, հեռուն կհասնես» տարբերակը: Դատելով ցուցակներից՝ տեղ հասանք, սակայն միանգամայն այլ սկզբունքով. մի քայլ առաջ, երկու քայլ՝ հետ:

Իրականում՝ բարձրացնելով քվոտան մինչև 20%՝ կուսակցությունները քայլ առաջ գրեթե չեն կատարել, եթե չասենք՝ հետընթաց են ապրել: Դա հատկապես զգալի է ցուցակներում տեղերի բաշխման առումով: Ընտրական օրենսգրքում ամրագրված սկզբունքը, այն է՝ *«2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»*, կուսակցություններից շատերն ընկալել են բառացիորեն. կանայք պետք է լինեն «յուրաքանչյուր վեցերորդ» տեղում և ոչ մի դեպքում՝ ավելի առաջ:

Արդյունքում՝ ցուցակների առաջին հնգյակում կամ, ինչպես սիրում են այն կոչել հենց կուսակցությունները՝ «սրբություն սրբոց»-ում, ընդամենը 4 կին են (Դեմոկրատական կուսակցություն, «Միավորված հայեր», «Օրինաց երկիր» և «Ժառանգություն»), այն դեպքում, երբ նախորդ ընտրություններում 17-ն էին:

Նույն հետընթացն է ցուցակների առաջին տասնյակում. 2007-ին առաջին տասը տեղերում ընդգրկված էր 37 կին, իսկ ներկայումս՝ ընդամենը 15-ը: Կասեք՝ խորհրդարան ձգտող կուսակցությունների մեծ մասը «ծանրքաշայիններ» են, որոնք ակնկալում են մեծ թվով մանդատնե՞ր: Թող այդպես լինի, սակայն մեծ հավակնություններ ունեցող այս բոլոր «ծանրքաշայինների» մոտ չափազանց ցածր է կանանց ներկայացվածությունը նույնիսկ առաջին քսանյակում՝ 3 կնոջից ոչ ավելի, բացառությամբ ՀՅԴ-ի (առաջին քսանյակում 4 կին է) և «Ժառանգության» (5 կին): Իսկ այն փաստը, որ, օրինակ՝ «Միավորված հայերի» առաջին քսանյակում 8 կին է ընդգրկված, թեկուզ միանգամայն գովելի է, բայց հերթական անգամ ապացուցում է հայտնի ճշմարտությունը. որքան շատ իշխանություն, այնքան քիչ կանայք: Այս ճշմարտությունը ներկայացվել է նաև այլ ձևով. որքան հեռու իրական իշխանությունից, այնքան ավելի շատ կանայք:

ՀՅԴ-ն, օրինակ՝ կարողացել է ապահովել իր ցուցակում կանանց ներկայացվածության գրեթե 32 տոկոսը՝ կիրառելով Եվրոպայի խորհրդի կողմից առաջարկվող «կայծակի» սկզբունքը, այսինքն՝ գրեթե հավասարաչափ բաշխելով կանանց և տղամարդկանց թեկնածությունները, սակայն միայն 20-րդ տեղից սկսած: Կարծում ենք ավելորդ է հարցնել, թե ինչո՞ւ այդ նույն սկզբունքը հնարավոր չէր կիրառել մինչև 20-րդ տեղը: Մեզանում նման հարցադրումը, դեռևս, հռետորական է…

Այն եզրահանգումը, որ ընդդիմադիր ուժերը իրենց ցուցակներում ավելի շատ կանայք են ընդգրկել, քան կոալիցիայի անդամ կուսակցությունները, արդարացված է միայն ՀՅԴ-ի (32%) և «Ժառանգության» (25%) պարագայում: Հայ ազգային կոնգրեսը այս հարցում մնաց քվոտայի շրջանակներում՝ ներկայացնելով ընդամենը 18% կին իր ցուցակում:

Ցուցակների որակական կազմի վերլուծությանը մենք դեռ անդրադառնալու ենք և այդ ժամանակ կկարողանանք պատասխանել այն հարցին, թե ի՞նչ մասնագիտության, տարիքի և զբաղմունքի տեր կանայք են ձգտում ներկայացված լինելու խորհրդարանում: Առայժմ նշենք միայն, որ թեկնածուների կազմում ակնհայտորեն շատացել են կին լրագրողները:

Բոլոր դեպքերում կանանց հարցում կուսակցությունները հասարակությունից շատ ավելի պահպանողական են գտնվել, հաշվի առնելով, որ սոցիոլոգիական հարցումների արդյունքներով Հայաստանի քաղաքացիները պատրաստ են տեսնելու ավելի շատ կանանց խորհրդարանում, քան այսօր կարողացել են առաջադրել մեր կուսակցությունները:

Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրատարածքներին, ապա ժամանակին ֆրանսիացի ֆեմինիստուհիները մի կարգախոս ունեին՝ «Համարձակվել պայքարել», և այդ իմաստով փորձագետները պնդում են, որ կանանց համար գլխավորը չվախենալն է: Այս անգամ 12 կին չվախեցավ, և դա կրկնակի ավելի է, քան նախորդ ընտրություններում: Միակ անհանգստացնող փաստն այն է, որ երեք ընտրատարածքներում առաջադրվել է երկուական կին, ու պետք չէ քաղտեխնոլոգ լինել՝ հասկանալու համար՝ նրանք ակնհայտորեն խանգարելու են միմյանց: Մնում է հուսալ, որ վերջնական գրանցման պահին նման հարցերը կհարթվեն:

Թամարա Հովնաթանյան

Հրավիրում ենք՝ WomenNet.am

Առաջադրվող կին թեկնածուների մասին առավել մանրամասն կարող եք կարդալ WomenNet.am նորաստեղծ կայքում, որտեղ դուք հնարավորություն կունենաք ոչ միայն օպերատիվ տեղեկատվություն ստանալու, այլ նաև ձեր մեկնաբանությունները թողնելու և օն-լայն քննարկումների մասնակցելու:

էլ. հասցեն՝ promediagender_arm@yahoo.com

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳՈՎ

Եղե՛ք իրատես, պահանջե՛ք անկարելին

- քանի որ միայն անկարելիի պահանջն է ապահովում շարժումը դեպի առաջ. այս բարեմաղթանքն է անում ընտրություններում իրենց թեկնածություններն առաջադրող կանանց մեր զրուցակից՝ քաղաքագիտության դոկտոր **Սվետլանա ԱՅՎԱԶՈՎԱՆ,** որը կին թեկնածուների նախապատրաստման բավական մեծ փորձ ունի:

Տղամարդկանց նման հարցեր չեն տալիս

Որպես կանոն՝ երբ կանայք իրենց առաջադրում են ընտրություններում, և լրագրողներն սկսում են աշխատել նրանց հետ, նրանց իսկույն հարցնում են. «Ձեզ ինչպե՞ս է հաջողվում համատեղել ընտանիքն ու հասարակական գործունեությունը»: Տղամարդկանց նման հարցեր չեն տալիս: Ինչո՞ւ Ժիրինովսկուց ոչ ոք չի հարցնում, թե նա ինչպես է գլուխ հանում իր թոռներից և ինչպես է մեծացրել սեփական որդուն: Կանանց շարունակ նման հարցեր են տալիս. ուտեստների մասին, որոնք նրանք սիրում են պատրաստել, ո՞ւմ մոտ են մազերը հարդարում, ո՞ւմ մոտ են հագնվում և այլն: Կամ՝ «Ձեզ ինչպե՞ս է հաջողվում այդքան երիտասարդ տեսք ունենալ»: Մենք առաջարկում ենք կանանց ի պատասխան՝ փոխել զրույցի թեման և հանդիպակաց հարց ուղղել. «Իսկ դուք չեք ցանկանում ինձ հարցնել, թե ես ի՞նչ կարծիքի եմ կառավարության տնտեսական քաղաքականության մասին, կամ ի՞նչ եմ մտածում արտաքին քաղաքականության մասին»: Այսինքն՝ մենք կանանց սովորեցնում ենք կոտրել կին քաղաքական գործիչների նկատմամբ կարծրատիպային մոտեցումները, որոնք բավական տարածված են:

Կին թեկնածուների հաջողության բանաձևը

«Եթե հասարակությունը նահապետական է, ապա իշխանություն գնացող կանանց չարժի կտրվել մայրական ֆունկցիաներին բնորոշ հոգատարության էթիկայից, այսինքն՝ պետք է ներկայանալ հասարակությանը ուղղակիորեն որպես մայր, որ պատասխանատու է այս երկրի երեխաների ապագայի համար: Ճգնաժամից հոգնած մարդիկ հոգատարության այդ էթիկան և դրանից բխող խթանները անկասկած դրական կընկալեն: Մնում է մշակել և՛ ձայնը, և՛ կերպարը, որը համապատասխանում է հոգատարության այդ էթիկային: Ու միշտ հիշել, որ քաղաքականությունը լուրջ և երկարատև ուղի է:

Քվեարկեք կանանց օգտին

Աշխարհի նկատմամբ տղամարդկանց մոտեցումն աչքի է ընկնում այս կամ այն հարցի լուծման ժամանակ ավելի շատ ուժային մեթոդների կողմնորոշմամբ, կանանց մոտեցումը՝ ավելի շատ հակվածություն դեպի երկխոսություն, փոխզիջումներ: Կանանց ավելի հոգեհարազատ են ընթացիկ, առօրյա կյանքի խնդիրները, այսինքն՝ սոցիալական հարցերի շրջանը: Ես այսպես կասեի՝ եթե կամենում եք հասարակությունում կայունություն և վստահություն վաղվա օրվա նկատմամբ, քվեարկեք կանանց օգտին:

Մրցակցուհիների մասին

Սովորաբար ասում են՝ քաղաքականությունն այնքան կեղտոտ գործ է, որ հենց կանայք չեն կամենում դրան մասնակցել: Եվ երկրորդ փաստարկ, որին ես, մասամբ, համաձայն եմ, բայց՝ միայն մասամբ: Մեզանում հիմնական ընտրողը կանայք են, ու նրանք չեն ցանկանում քվեարկել կանանց օգտին՝ նախանձի և խանդի պատճառով: Իրոք, եթե հազարամյակներով մեր գլուխը մտցրել են, որ կնոջ համար լավագույն կարիերան հաջող ամուսնությունն է, ենթագիտակցորեն դու մյուս կնոջը կսկսես նայել որպես մրցակցի: Դա կա, սակայն ոչ այն չափով, ինչ ցանկանում են մեզ ներշնչել:

ԿՈՒԼԻՍՆԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ

Գնահատված չլինելու սինդրոմը

Ցուցակների հետ կապված առնվազն երկու նախընտրական սկանդալ էր առնչվում կանանց հետ: Դուռը շրխկացրեց և «Ժառանգությունից» դուրս եկավ կուսակցության քարտուղար Կարինե Հակոբյանը, որը լինելով «Ժառանգության» և «Ազատ դեմոկրատների» միասնական ցուցակի 10-րդ տեղում՝ բարձրաձայնեց իր դժգոհությունը ցուցակի կազմման սկզբունքից: Ցուցակի կազմը, նրա խոսքով, անսպասելի էր ոչ միայն իր համար: Նույն պատճառաբանությամբ «Օրինաց երկրից» դուրս եկավ մամուլի քարտուղար Սուսաննա Աբրահամյանը՝ հայտարարելով, որ ցուցակում 36-րդ տեղն ապացուցում է, որ կուսակցության իմիջի վրա իր աշխատանքն ըստ արժանվույն չի գնահատվել:

Հասարակության մեջ հարցեր չէր կարող չառաջացնել նաև Լարիսա Ալավերդյանի 41-րդ տեղը, մի պատգամավոր, որն անցյալ ընտրություններում «Ժառանգության» ցուցակում երկրորդն էր և իր անունով անկասկած նպաստել էր կուսակցության խորհրդարան մտնելուն: Ավելի ուշ Ալավերդյանը հայտարարեց, որ ինքն է ընտրել ոչ անցողիկ տեղը, քանի որ համաձայն չէր «Ազատ դեմոկրատների» հետ միանալուն: Նա փորձեց վերջ դնել բոլոր խոսակցություններին՝ հայտարարելով. «Իմ 41-րդ տեղը ցուցակում մեսիջ է հասարակությանը, որ հավերժ պատգամավորներ չեն լինում»:

Գուցե դա այդպես է, բայց իրականում այս մեսիջը կարծես թե տարածվում է միայն կանանց վրա: Որպես օրինակ կարելի է դիտարկել կանանց ռոտացիան ՀՅԴ ցուցակում:

Ինչո՞ւ հինգ տարի խորհրդարանում ակտիվությամբ աչքի ընկած (parliamentmonitoring-ի տվյալներով) պատգամավոր Լիլիթ Գալստյանը միայն 20-րդն է ցուցակում, և ինչո՞ւ կուսակցությունը, որն ի սկզբանե, կարծես թե, դեմ չէր նրան սատարել մեծամասնական ընտրատարածքում, որոշեց հրաժարվել այդ մտքից: Թեպետ ինքը՝ Լիլիթ Գալստյանը, վճռական էր տրամադրված ու պարզապես սպասում էր, որ կուսակցությունը համապատասխան որոշում կայացներ իրեն սատարելու մասով: Որոշումը չուշացավ՝ կուսակցական ցուցակի 20-րդ տեղը:

Ցուցակ կազմելը, անշուշտ, կուսակցության ներքին գործն է, բայց բոլոր դեպքերում կարիք կա հանրությանը բացատրելու՝ ի՞նչ սկզբունքով է դա արվել: Դա իհարկե ոչ միայն Դաշնակցությանն է վերաբերում: Եթե խոսքը կադրերի ռոտացիայի մասին է, ապա հարց է ծագում՝ ինչո՞ւ ռոտացիոն սկզբունքը հատկապես կանանց նկատմամբ է կիրառվում, իսկ տղամարդկանց շրջանում խիստ հազվադեպ է: Եվ արդյոք շռայլություն չէ՞ կուսակցությունների կողմից՝ հետ մղել իրենց իսկ աճեցրած կանանց կադրերը, որոնք լիովին արդարացրել են կուսակցության վստահությունը:

ԱՌԱՍՊԵԼ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանուն «ընտանեկան արժեքների»

պահածոյացնենք կանանց աշխարհընկալո՞ւմը

Գենդերային հավասարության հակառակորդները միայն տղամարդիկ չեն: Ու ոչ միշտ են տղամարդիկ: Հաճախ մամուլի էջերում հենց կանայք են անվերապահորեն պաշտպանում այսպես կոչված ավանդական հասարակության կողմից իրենց «վերապահված» տեղը՝ քաղաքական գործընթացներում կանանց մասնակցությունը գնահատելով որպես «թույլ սեռի հերթական քմահաճույք»: Բնականաբար, յուրաքանչյուր տեսակետ գոյության իրավունք ունի: Միակ խնդիրն այն է, որ այն «ավանդույթները», որոնց վրա խարսխված է նման դիրքորոշումը, ոչ այնքան ավանդույթներ են, որքան դոգմաներ: Ինչ-որ մեկին դուր է գալիս կառչել վաղուց իր դարն ապրած հասկացություններից, ավելին՝ տարածել և հրամցնել որպես ճշմարտություն, թեև, ըստ էության, խոսքն առասպելների մասին է:

Առասպել թիվ 1.
Ավանդական հասարակությունները լրջորեն չեն ընդունում կնոջը քաղաքականությունում:

Մենք, անշուշտ, հեռու ենք (օ՜, ոչ այնքան հեռու, որքան թվում է) այն օրից, երբ մեր երկրում կլինի նախագահի պաշտոնին հավակնող կին թեկնածու: Արժանի թեկնածուի դեպքում կարելի է չկասկածել, որ նա համարժեք կընկալվի: Այլ հարց է, որ կանցնեն մի շարք ընտրություններ, մինչև կինը կարողանա զբաղեցնել երկրում բարձրագույն պետական պաշտոնը: Ու պատճառը ոչ միայն նավթալինահոտ կարծրատիպերն են, այլև տղամարդկանց կոպիտ չափանիշներով ձևված մեր ընտրական համակարգը: Պատճառը նաև կնոջ սոցիալական դիրքն է: Ընտրություններին մասնակցելու համար, հայտնի բան է, անհրաժեշտ են ոչ քիչ նյութական միջոցներ: Մեր երկրում միջոցները, դարձյալ, ըստ «ավանդույթի», կենտրոնացված են տղամարդկանց ամուր ձեռքերում: Ընդ որում, միջոցները նրանց ձեռքում են, ով կազմում է հասարակության 10%-ից պակասը: Ահա թե ինչու ստացվում է, որ քաղաքականությամբ կնոջ զբաղվելու համար դա նախ և առաջ պետք է կամենան տղամարդիկ: Նրանք պետք է այնքան շռայլ և վեհանձն լինեն, որ հոգան նրա ընտրական քարոզարշավի ծախսերը, կամ, եթե խոսքը քաղաքական ուժերի առաջնորդների մասին է, ընդգրկեն նրան իրենց կուսակցական ցուցակներում, ընդ որում՝ անցողիկ տեղում: Արդյոք շա՞տ են մեզանում նման «շռայլ» տղամարդիկ:

Այս հարցին պատասխանելը դժվար չէ, եթե հաշվի առնենք, որ իշխանական օղակներում կանանց ներկայացվածությամբ մենք զիջում ենք տարածաշրջանի մեր բոլոր հարևաններին: Սրանում է իրավիճակի անհեթեթությունը: Այլ ոչ թե նրանում, որ հասարակությունում լրջորեն չեն ընդունում քաղաքականապես ակտիվ կանանց: Լրջորեն չեն ընդունում թերևս միայն այն կին ակտիվիստներին, որոնք ոչ մի միջոցից չեն խորշում՝ իշխանության բերելու իրենց քաղաքական տղամարդ կուռքերին:

Անկախության տարիներին Հայաստանում ստեղծվել են մի քանի զուտ կանանց կուսակցություններ: Դրանցից ոչ մեկը չի համապատասխանել իր առաքելությանը՝ քաղաքական ուժի առաքելությանը: Նրանք գործել են հասարակական կազմակերպության սկզբունքով: Միակ կուսակցությունը, որը խորհրդարանում ձևավորել էր իր կանանց խմբակցությունը, այնուամենայնիվ տղամարդկանց նախագիծ էր՝ խիստ կարճատև, այսպես ասած՝ մեկանգամյա:

Այստեղ, իհարկե, կարելի է խոսել նաև կանանց համերաշխության մասին: Ակտիվ կին ընտրողների ներուժը համախմբելու բոլոր փորձերը, որպեսզի նրանք գիտակցաբար առաջադրեին իրենց ներկայացուցիչներին օրենսդիր իշխանությունում, նպատակին չեն հասել: Դարձյալ «շնորհիվ» կարծրատիպերի, «ավանդական հասարակությունում» կնոջ դերի մասին պատկերացումների և մասամբ իներցիայի: Կանայք սովորաբար քվեարկում են տղամարդկանց օգտին, նրանք չեն շտապում կոտրելու իշխանության նկատմամբ տղամարդկանց մենաշնորհը: Նրանց զայրացնում են քաղաքականապես ակտիվ կանայք, որովհետև իրենք չեն կարող կրկնել նրանց, թող որ, վիճահարույց, բայց հաջողությունը: Ահա թե ինչու կանանց համերաշխությունը սովորաբար արտահայտվում է այն դեպքերում, երբ պետք է սփոփել և քաջալերել դավաճան ամուսնուց տառապող ընկերուհուն կամ հարևանուհուն և այլն:

Ամփոփելով՝ մեկ անգամ ևս ընդգծենք. խնդիրը հասարակության կողմից կին քաղաքական գործիչներին ընկալելը չէ: Խնդիրն իշխանության նկատմամբ տղամարդկանց մենաշնորհն է և կանանց քաղաքական հավակնությունների սոցիալապես ամրապնդված չլինելը: Իսկ որ այդ հավակնությունները կան և երբեմն միանգամայն հիմնավորված են, չարժի կասկածել: Միայն նրանք, ովքեր տառապում են սեքսիզմով, կարող են լրջորեն պնդել, թե կնոջ ուղեղը տղամարդու ուղեղից փոքր է: Իսկ եթե այդպես են մտածում նաև որոշ կանայք, ապա նրանց ուղեղն իրոք փոքր է Սակայն սա ամենևին չափանիշ չէ, որով պետք է գնահատել նաև մյուսներին:

Առասպել թիվ 2.
Քաղաքականությունում կինն անպայման ընդօրինակում է տղամարդկանց վարքագիծը՝ դրանով վնաս հասցնելով բացառապես կանացի գծերին և կնոջ աշխարհընկալմանը:

«Տղամարդու աշխարհ մտնող կինը պետք է ընդունի նրա կանոնները և գրեթե միշտ՝ ի վնաս բնության կողմից իրեն տրված հատկությունների և կնոջ աշխարհընկալման: Իսկ մեր օրերում, երբ բազմաթիվ քաղաքական գործիչների մակարդակը, ավաղ, կարող էր ավելի բարձր լինել, որքանո՞վ հարմարավետ է զգում իրեն կինը նման միջավայրում»,- դժվար է հասկանալ, թե ի՛նչն է ավելի շատ մտահոգում նման մտքեր ծնող հեղինակներին: Կին քաղաքական գործչի հարմարավետությո՞ւնը, թե՞ տղամարդու աշխարհում նրա հարմարեցման կողմնակի հետևանքները:

Փորձենք «հանդիպակաց» հարցեր ուղղել. որքանո՞վ է հաճելի կնոջն ապրել այն զգացումով, որ ինչ-որ մեկը գծել է իր «առաստաղը»: Դե իսկ եթե կինը շարունակ գլխով խփում է այդ նշածողի՞ն: Իսկ եթե կինը կարող է ավելի՞ն, քան միայն զբաղվել տնտեսությամբ կամ ըստ մասնագիտության զուտ «կանացի» գործով: Բնատուր կանանց հատկությունները, պետք է ենթադրել, արտահայտվում են նրանով, որ լինեն թխսկան, հոգ տանեն օջախի ջերմության մասին, սպասեն ամուսնուն աշխատանքից հետո: Կամ՝ եթե ամուսինն աշխատանք չունի, ամբողջ տնտեսությունը կրեն իր ուսերին՝ օջախին «փայտեր» ավելացնելով և մեղմորեն ժպտալ՝ ձմռան համար պահածո փակելով: Իսկ ո՞վ է ասել, որ սրանք իսկական կանանց հատկություններ են և իրական ընտանեկան արժեքներ: Եվ որ իշխանությունում գտնվող կինը իր հարևանուհի տնային տնտեսուհուց այդ ամենն ավելի վատ կանի, և որ նրանից ընտանիքին օգուտը քիչ է:

Բնավ պարտադիր չէ, որ պատասխանատու պաշտոնում կինն անպայման տղամարդ գործընկերներին ընդօրինակի: Այս թեզիսը, եթե դեռ չեք հասկացել, հնացել է: Ընդհակառակը՝ միտումներն այնպիսին են, որ հիմա ընդունված է ընդգծել կանացիությունը, եթե նույնիսկ այն ի ծնե չի էլ եղել: Համենայն դեպս, սա ամենագլխավոր հարցը չէ, որովհետև կարևոր չէ, թե կին նախարարն ինչ քայլվածք, ինչ խոսելաոճ ունի և այլն: Չէ՞ որ մենք չենք դատում տղամարդ նախարարներին այս չափանիշներով, մեզ առանձնապես չի հուզում, թե կառավարության անդամը բռի, անտաշ է, ինչպես «վայել» է տղամարդուն, կամ շատ խնամված է... Իսկ այն, որ կինը կարող է ինչ-որ բան կորցնել՝ աշխատելով տղամարդկանց միջավայրում, ընդ որում՝ ոչ այնքան կիրթ, ապա այս հարցին նախընտրելի է մյուս կողմից մոտենալ՝ արդյոք հասարակությունը կշահի՞ նրանից, որ այս կամ այն գծերով օժտված կինը, որն ունի այս կամ այն ծառայության ցուցակ, լինի նախարար: Չափանիշը պետք է մեկը լինի՝ անկախ սեռից:

Կնոջ աշխարհընկալումը պահածոյացնելու համար սմբուկ չէ: Աշխարհն ի սկզբանե «երկբևեռ» է՝ տղամարդու և կնոջ: Այնտեղ, որտեղ կա մի հայացք, պետք է լինի նաև մյուսը՝ հավասարակշռության, ներդաշնակության համար, որպեսզի գործընթացները օպտիմալ զարգանան ընտանիքում, իշխանությունում, երկրում, ողջ աշխարհում: Կնոջ դիրքի խտրականությունը հինգնաբերաբար հանգեցնում է ձևախախտումների բոլոր ոլորտներում:

Նախաստեղծ «կանացի էությունը» տուժում է ոչ թե այն բանից, որ կինը զբաղվում է քաղաքականությամբ: Այն տուժում է, երբ նրան ճնշում են, երբ ասելիք ունեցող կնոջ բերանը փակում են՝ մատնացույց անելով նրա սեռը: Գենդերային հավասարության կամ սեռերի հավասարության տեսությունը ծնունդ է առել ոչ կանանց և տղամարդկանց միջև սեպ խրելու համար: Սա ընտանիքի և պետության շրջանակներում խաղաղ գոյակցության միակ ողջախոհ ձևն է: Այս տեսությունը չի ոտնահարում ոչ մեկի էությունը, սոսկ ամրագրում է բոլոր մարդկանց իրավունքները, անկախ սեռական պատկանելությունից, ազատ ինքնիրացում, ի դեպ՝ ազատությունից չզրկելով նաև նրանց, ով չի կամենում օգտվել այդ իրավունքից:

Նանա Գևորգյան

Բլից

Կանայք ուզում են փոխել կյանքը

«Ես մարդկանց այլընտրանք կառաջարկեմ»

Բիրտ ուժին կհակադրեմ քաղաքակիրթ միջոցները, մարդկանց այլընտրանք կառաջարկեմ: Չեմ կարող ասել, թե մեր օրերում դա իրական է, բայց նաև չեմ կարող չհավատալ մեր կուսակցության ուժին:

Անահիտ Բախշյան,
Մանկավարժ, ԱԺ պատգամավոր,
«Ժառանգության» ցուցակում 14-րդն է,
առաջադրվել է թիվ 12 ընտրատարածքում

«Դու ուժեղ ես, որ ազնիվ ես, որ քո պայքարն արդար է, և հետ նայելու տարբերակ այլևս չունես»

Երբ 2007-ին նոր մտա քաղաքականության մեջ, ինձ փորձեցին ծաղրել, լուրջ չընդունեցին: Երբ առաջին անգամ ստադիոնում թռուցիկներ էինք բաժանում, ինձ Ազգային ժողովի քաղաքական «էլիտայի» ներկայացուցիչներն ասում էին՝ դու արդեն քաղաքական գործիչ ես, պետք է լուրջ գործերով զբաղվես, ինչպե՞ս կարելի է նման գործելաոճ դրսևորել: Բայց պահ է գալիս, երբ սկսում են վախենալ քեզնից:

Զարուհի Փոստանջյան,
Իրավաբան, ԱԺ պատգամավոր,
«Ժառանգության» ցուցակում 3-րդն է,
առաջադրվել է թիվ 4 ընտրատարածքում

«Մտածող, չհամաձայնող, վիճող Ազգային ժողով եմ ուզում»

Խորհրդարան մտնելու որոշումը կայացրել եմ սրտացավությունից ելնելով: Կարևոր չէ ղեկավարել, կարևորը ինչ-որ բան սկսելն է, փոխելը: Կարծրատիպեր կան, դրանք կոտրել է պետք: Կռիվ ունեմ տալու, իսկ կռիվ տալու լավագույն ձևը օրենսդիրում լինելն է: Մտածող, չհամաձայնող, վիճող Ազգային ժողով եմ ուզում:

Շուշան Պետրոսյան, երգչուհի,
ՀՀԿ ցուցակում 16-րդն է

«Իմ ընտրողն այն քաղաքացին է, ով չի ուզում Հայաստանից գնալ»



Իմ ընտրողն այն քաղաքացին է, ով ուզում է ապրել այս երկրում, ով չի պատրաստվում թույլ տալ, որ իրեն նսեմացնեն 5 հազար դրամի դիմաց, և այն քաղաքացին, որ իր երեխաների համար արժանապատիվ կյանք է ուզում…

Լիլիթ Գալստյան,
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԱԺ պատգամավոր, ՀՅԴ, ցուցակում 20-րդն է

«Հնարավորություն կունենամ ասելիքս նոր հզորությամբ հասցնել մարդկանց»

Քաղաքականությամբ միշտ հետաքրքրվել եմ, չնայած կուսակցական էլ չեմ: Ստանալով առաջարկ «Ժառանգություն» կուսակցությունից՝ շատ ուրախացա, որ նոր հորիզոններ են բացվում կուտակված փորձի և գիտելիքների և այն գաղափարների իրականացման համար, որոնք մինչ այդ մնում էին իմ բլոգում: Այնպիսի զգացողություն միշտ ունեի, որ ես գոռում եմ, բայց իմ ձայնը լսելի չէ: Այժմ ես հնարավորություն կունենամ ասելիքս հասարակությանը հասցնել ավելի բարձր հարթակից, նոր հզորությամբ: Կիսելով «Ժառանգության» ծրագրերն ու նպատակները՝ համոզված եմ, որ կկարողանամ որակական նոր փոփոխություններ մտցնել մեր իրականության մեջ:

Իզաբելլա Աբգարյան,
Թարգմանիչ, բլոգեր
«Ժառանգության» և «Ազատ դեմոկրատների»
միասնական ցուցակում 9-րդն է

«Կանայք, ովքեր դուրս են գալիս իրենց խոհանոցներից, շատ բաների են հասնում»

Կնախընտրեի, որ կանայք այնքան արժանավոր լինեին, որ առանց որևէ քվոտավորման տեղ ունենային խորհրդարանում և ընդհանրապես՝ քաղաքականության մեջ: Բայց չնայած խաղի կանոնները սահմանում են տղամարդիկ, և կանանց համար մի փոքր դժվար է խաղալ այդ կանոններով, սակայն, այն կանայք, ովքեր փորձ են անում «դուրս գալ իրենց խոհանոցներից» և նպատակաուղղված առաջ են գնում, շատ բաների են հասնում:

Լյուդմիլա Սարգսյան,
ՍԴՀԿ ատենապետ,
ՀԱԿ-ի ցուցակում 6-րդն է

«Լրագրության մեջ հավատալով եմ աշխատել, նույնը կշարունակեմ քաղաքականությունում»…

ՀՀԿ անդամ դառնալու որոշումս դժվարությամբ եմ կայացրել: Բայց, կարծում եմ, ընտրությունս բնական կհամարեն բոլորը, որովհետև երկար տարիներ աշխատել եմ կուսակցության հետ, կուսակցության նախագահի հետ, հավատում եմ բոլոր այն բաներին, որ ասում է այս կուսակցությունը: Լրատվության մեջ աշխատելով՝ ցանկացել եմ փոխել հասարակության կյանքը, հավատալով եմ աշխատել, նույնը կշարունակեմ նաեւ քաղաքականության մեջ:

Մարգարիտ Եսայան,
«Առավոտ» օրաթերթի լրագրող
ՀՀԿ ցուցակում 26-րդն է

Դիրքորոշում

«Ուզում եմ, որ երեխաս նորմալ երկրում ապրի»

«168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանն առաջադրվել է թիվ 4 ընտրատարածքում որպես պատգամավորի թեկնածու: Մեր զրույցի ընթացքում փորձեցինք պարզել, թե ինչու է սիրած աշխատանք և ընտանիք ունեցող կինը ցանկանում դառնալ Ազգային ժողովի պատգամավոր և հավելյալ պատասխանատվություն ստանձնել:

- Հավատացե՛ք՝ թեկնածությունս առաջադրելու որոշումը հեշտությամբ չեմ կայացրել և առաջին հերթին ինքս իմ ներսում բազմաթիվ հարցեր պարզելուց հետո որոշեցի առաջադրվել թիվ 4 ընտրատարածքում՝ Արաբկիրում, որտեղ ես ծնվել, մեծացել եմ և ապրում եմ մինչ օրս: Որոշմանս պատճառն այն է, որ ես ուզում եմ ապրել այս երկրում: Անտարբեր քաղաքացի երբևէ չեմ եղել, որպես լրագրող և խմբագիր մշտապես եղել եմ հասարակության կողքին, և «168 ժամ» թերթի ընթերցողները կարող են դա հաստատել: Եթե մինչ օրս որպես լրագրող, որպես խմբագիր մասնագիտական առումով հասարակության խնդիրների, երկրի կարևորագույն հարցերի նկատմամբ մարդկանց ուշադրությունն ենք հրավիրել, ապա պատգամավոր ընտրվելուց հետո, կարծում եմ՝ անմիջական մասնակցություն կունենամ այդ խնդիրների լուծման գործում:

- Ընտրական օրենսգրքի փոփոխությունից հետո կուսակցություններում կարծես կանանց դեֆիցիտ սկսվեց, բոլորը պատրաստված կանանց էին փնտրում, որպեսզի ներգրավեին իրենց նախընտրական ցուցակում: Համամասնական ցուցակով Դուք շատ ավելի հեշտ կհայտնվեիք խորհրդարանում: Ինչո՞ւ եք ընտրել ավելի բարդ ճանապարհը:

- Իհարկե, ավելի հեշտ կլիներ ընդգրկվել որևէ կուսակցության համամասնական ցուցակում, ու, ինչպես դուք ասացիք՝ հայտնվել Ազգային ժողովում: Սակայն նախ՝ ես չեմ տեսնում այն քաղաքական ուժը, որին կարող էի անդամակցել: Ես անկուսակցական եմ, երբևէ որևէ կուսակցության անդամ չեմ եղել և ուզում եմ ինքնուրույն փորձել իմ ուժերը: Բացի այդ, ես ուզում եմ ոչ թե հայտնվել ԱԺ-ում, այլ ընտրվել ԱԺ պատգամավոր: Դրանք սկզբունքորեն տարբեր բաներ են: Ես ուզում եմ խոսել մարդկանց հետ, ևս մեկ անգամ լսել նրանց հուզող խնդիրների մասին: Հայաստանում, իհարկե, այլ ավանդույթներ են ձևավորվել. մարդիկ շատ հաճախ նույնիսկ իրենց «պատգամավորի» դեմքը տեսած չեն լինում, պատգամավորության շատ քիչ թեկնածուներ են նրանց հետ հանդիպումներ ունենում: Եվ սա վերաբերում է թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական ընտրակարգով «ընտրված» պատգամավորներին:

- Համաձա՞յն եք, որ Հայաստանում կանանց նկատմամբ դեռևս խտրական վերաբերմունք է նկատվում:

- Հայաստանում, ինչպես և շատ այլ երկրներում նման կարծրատիպ կար, որ կինը պետք է լինի խոհանոցում և զբաղվի միայն տան հոգսերով: Աշխարհը փոխվել է, փոխվում է ամեն օր: Հայաստանում ևս հետզհետե սկսում են այլ կերպ մտածել. այդ մոտեցումը բավականաչափ նահանջել է: Կանայք ընդգրկված են և՛ բիզնեսում, և՛ քաղաքականության մեջ, և՛ հասարակական ակտիվ գործունեություն են ծավալում: Պարզապես կանանց համերաշխությունն է պակասում. Հայաստանում տղամարդիկ ավելի համերաշխ են միմյանց հետ: Լավ կլինի, որ կանայք էլ համերաշխ լինեն և միմյանց աջակցեն: Կանայք կարող են կարևոր դերակատարում ունենալ քաղաքացիներին հուզող բոլոր խնդիրների լուծման գործում:

- Վերջերս երեխա եք լույս աշխարհ բերել, կարծես թե այդ հանգամանքը դժվար է կապվում քաղաքական ակտիվության հետ:

- Երեխայի ծնունդն իսկական հրաշք է, սակայն միաժամանակ քեզ դարձնում է անհամեմատ ավելի պատասխանատու՝ ամեն ինչի, ցանկացած քայլի հանդեպ: Սկսում ես վերանայել ամեն ինչ: Երեխայի ծնունդը նաև տարբեր վախեր է առաջացնում: Ասեմ ամենապարզ, մարդկային, մայրական բառերով՝ ուզում եմ, որ իմ երեխան նորմալ երկրում ապրի: Ուզում եմ, որ լավ դպրոցում սովորի, առողջ հասարակության մեջ ապրի, լավ մարդկանցով շրջապատված լինի… Երբ այս ամենի մասին մտածում ես՝ ակամայից հարց է ծագում. իսկ էլ ի՞նչ կարող եմ անել այդպիսի Հայաստան ունենալու համար: Արդյոք պե՞տք է թույլ տամ, որ այս վիճակը շարունակվի, որ գրեթե ոչ տառաճանաչ մարդիկ գան իշխանության և օրենքներ գրեն, որոշեն մի ամբողջ հասարակության ճակատագիրը: Երեխայի ծնունդով ես նոր ուժ ստացա, հասկացա, որ որպես այս երկրի նկատմամբ ոչ անտարբեր մարդ՝ ես պետք է քայլ կատարեմ:

Արման Ղարիբյան

Հարցազրույցը լրիվ կարդացեք WomenNet.am կայքում

Փորձագետի անկյուն

«Երբ կոլեկտիվը միասեռ է, այն ճահճանում է. խորհրդարանը բացառություն չէ»

- Այսօր խորհրդարանում կա 11 կին պատգամավոր, սակայն դա բավարար չէ, որ հասարակությունը կարողանա բարձր գնահատել կնոջ դերը քաղաքական կյանքում, թեպետ կանայք ավելի ակտիվ էին այս գումարման ընթացքում, ավելի հաճախ էին ելույթ ունենում: Ցավալի է, բայց մեր կատարած բազմաթիվ հարցումները ցույց են տալիս, որ հայ հասարակությունը շարունակում է չընկալել կնոջը՝ որպես քաղաքական, պետական դեմքի: Պետք է առնվազն լինի 30-40 կին պատգամավոր, ովքեր ընդգրկված լինեն բոլոր հանձնաժողովներում, առավել շատ ելույթներ ունենան, որ կարողանան ներկայանալի դառնալ հանրության համար: Գործադիր իշխանությունում էլ ունենք ընդամենը երկու կին նախարար, պետք է գոնե հինգը լինեն, նախարարների տեղակալներն էլ կին լինեն, որ հասարակությունը զգա կանանց ներկայությունը իշխանության մեջ: Մենք դեռ մնում ենք արական մշակույթի տիրույթում: Տղամարդը պատրաստ չէ ընդունելու փաստը, որ կինը կարող է քաղաքական գործիչ լինել, այն էլ՝ առավել խելոք, գրագետ...

Երբ ինձ ասում են՝ մեզ պետք է կոլեկտիվ, որ կարողանա խմբային լավ գիտակցություն ունենա, ապա ես առաջարկում եմ, որ այդ կոլեկտիվում լինեն և՛ կանայք, և՛ տղամարդիկ, որպեսզի միմյանց լրացնեն: Երբ կոլեկտիվը միասեռ է, այն ճահճանում է: Խորհրդարանը բացառություն չէ: Երբ տարբեր սեռեր են, առկա է մրցակցություն, աշխատողները սրամիտ են դառնում, վերաբերմունքը, խոսակցությունը, մթնոլորտը՝ ամեն ինչ փոխվում են:

Ահարոն Ադիբեկյան,
«Սոցիոմետր» կենտրոնի ղեկավար

«Կանայք առանց օրենքը կարդալու կոճակ չեն սեղմի»…

- Տասը տարի առաջվա և այսօրվա մտածելակերպի պարզ համեմատությունը թույլ է տալիս փաստել, որ հասարակության վերաբերմունքը կանանց հանդեպ փոխվում է, կանանց ավելի շատ են սկսում վստահել: Դրան հատկապես նպաստում է որոշ կին պատգամավորների աշխույժ գործունեությունն ի նպաստ հասարակությանը: Փոփոխությունները կանանց օգտին են, ուղղակի դրանք շատ դանդաղ են ընթանում:

Այն, ինչ թույլ է տալիս իրեն տղամարդ պատգամավորների մեծ մասը՝ գռեհիկ արտահայտություններ կամ արարքներ, կանայք երբեք թույլ չեն տա, նրանք ուղղակի չեն իջնի այդ մակարդակին: Կանայք ավելի զուսպ են, բանավիճելու ընթացքում էլ աշխատում են դիմացինին չվիրավորել: Նրանք նաև ավելի պատասխանատու են՝ եթե ինչ-որ օրենքի մասին արտահայտվում են, ապա, համոզված եմ՝ մինչ ելույթը առնվազն կարդացել են այդ օրենքը: Այսինքն, ի տարբերություն տղամարդկանց, առանց կարդալու կոճակ չեն սեղմի: Մի խոսքով՝ օրենսդրական աշխատանքի առումով կանայք շատ ավելի որակյալ կադրեր են:

Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ, Հայկական
սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ

«Եթե խոսք եք ակնկալում՝ հանձնարարեք տղամարդուն, թե գործ է պետք՝ վստահեք կնոջը»

- Քաղաքական ուժերի ցուցակներում որոշակի հորիզոնականներում կանանց են դնում, քանի որ օրենքի պահանջը կա: Ընդամենը օրենքին են հետևում, դրանից դուրս կանայք մեծ մասամբ չկան: Սակայն անգամ պարտադրված լինելու պարագայում քայլը դրական եմ գնահատում, քանի որ հնարավորություն ստանալով՝ կանայք ոգևորվում և գործում են:

Կանանց գործունեությունը խորհրդարանում և քաղաքականությունում ընդհանրապես հաջողված է: Օրինակներ ունենք՝ «Ժառանգություն» խմբակցության կանայք: Եվ ընդհանրապես, ոլորտներ կան, ասենք՝ սոցիալական, մշակույթի, կրթության, ուր կինը տղամարդուց շատ ավելի լավ է կարողանում գործել:

Ամերիկյան ասացվածք կա. «Եթե խոսք եք ակնկալում՝ հանձնարարեք տղամարդուն, թե գործ է պետք՝ վստահեք կնոջը»:

Մեզ մոտ խնդիրը քաղաքական տեխնոլոգի կամ իմիջմեյքերի հարթությունում չէ, այլ այն բարքերի և ավանդույթների, որոնք ընդունված են Հայաստանում:

Քաղաքական սեքսիզմը դրսևորվում է և՛ գործադիրում, և՛ օրենսդիրում: Բայց անգամ եթե կանանց ներգրավման ուղղությամբ քայլերն արվում են միայն օրենքի պահանջից ելնելով, կարևորը, որ արվում են, որ գործընթացն առաջ է գնում...

Տիգրան Հակոբյան,
քաղաքական տեխնոլոգ

Կանանց խոսափող

Ինչպիսի՞ն է լինելու «կանանց օրակարգը»

Ասում են՝ քվոտավորման համակարգն առավել արդյունավետ է գործում միայն այնտեղ, որտեղ գոյություն ունի կանանց հասարակական ակտիվ շարժում:
Ի՞նչ հարցեր են բարձրացնելու կանանց կազմակերպությունները Ազգային ժողով ուղղվող կուսակցությունների առջև և ի՞նչ սպասելիքներ են կապում նրանք այդ կուսակցությունների ցուցակներում ընդգրկված կանանց հետ: Այլ կերպ ասած՝ ինչպիսին է այն հիմնախնդիրների շրջանակը, որոնց շուրջ ձևավորվելու է այսպես կոչված «կանանց օրակարգը»:
Մեր զրույցները մի քանի կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ցույց տվեցին, որ ապագա պատգամավորներին ուղղված հարցերի և առաջարկների ցանկը, գուցե, միասնական չէ, սակայն ընդհանուր առմամբ ձևավորված է և հնչեցվելու է նախընտրական քարոզարշավի մեկնարկի հետ միասին: Բացի այդ, ՀԿ-ներից շատերը մտադիր են ուշադիր ուսումնասիրել կուսակցությունների ծրագրերը՝ տեղեկանալու համար, թե որ կուսակցությունն ինչ հարցեր է ներառել՝ կանանց հետ կապված: Ակնհայտ է նաև, որ բարձրաձայնվող հարցերի բնույթը շատ հաճախ կապված է այս կամ այն ՀԿ գործունեության ոլորտի հետ:

Այսպես, **«Կանանց ռեսուրսային կենտրոն»** ՀԿ տնօրեն Լարա ԱՀԱՐՈՆՅԱՆԸ մեզ հետ զրույցում նշեց. «Երկու հիմնական հարց ենք առանձնացրել մեզ համար. նախ՝ կուսակցությունների ծրագրերում որքանո՞վ են ներառված կանանց հիմնախնդիրները և, մասնավորապես, գենդերային հիմքով բռնության հարցը: Աշխատելով այս ոլորտում՝ մենք շատ բացեր ենք տեսնում՝ սկսած օրենսդրական դաշտից մինչև ապաստարանների խնդիրը: Սա մեկ ՀԿ-ի գործը չէ, և պետք է պետական մոտեցում: Իսկ երկրորդ հարցը վերաբերում է կանանց տնտեսական հնարավորությունների զարգացման հիմնախնդրին: Այդ նպատակով կազմակերպությունը որոշել է տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ շաբաթը երկու անգամ հանդիպումներ կազմակերպել, որպեսզի նրանք ներկայացնեն իրենց քաղաքական ծրագրերը, և մենք էլ նրանց ուղղենք մեզ հուզող հարցերը:

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի» նախագահ Լիլիթ ԱՍԱՏՐՅԱՆԸ կարևորեց իրենց համագործակցության փորձը ԱԺ-ի և այդ թվում նաև՝ կին պատգամավորների հետ: «Նրանք իրենց փորձը ներկայացրել են երիտասարդ սերնդի կանանց՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռել բարձրացնել հարցեր, որոնք հետաքրքրել են մեր շահառուների խմբին: Նախընտրական փուլում հատուկ ուշադրություն ենք դարձնելու, որ ընտրապայքարի մեջ մտած կուսակցություններն իրապես կարևորեն կանանց դերը մեր կյանքում, պետության մեջ և հասարակության տարբեր ոլորտներում: Նայելու ենք նաև, թե կուսակցություններից յուրաքանչյուրն ինչ լուծումներ կառաջարկի իրենց ծրագրի շրջանակներում գործազրկության հիմնախնդրի վերաբերյալ, հատկապես կանանց գործազրկության: Կարևորելու ենք առողջապահության հարցը ևս»:

Կին առաջնորդների ֆորումի համակարգող խորհրդի նախագահ Դուստրիկ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ նշեց, որ խորհրդում ընդգրկված կանայք ներկայացնելու են ընտրություններին մասնակցող կուսակցություններին Կանանց հիմնախնդիրների պլատֆորմը, որը մշակել էին անցյալ տարվա մայիսին՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և Ազգային ժողովրդավարության ինստիտուտի կողմից կազմակերպված «Կանայք քաղաքականության մեջ» թեմայով համաժողովի ժամանակ:

«Պլատֆորմի գերակայությունները չորսն են՝ կանանց քաղաքական մասնակցություն, կանանց տնտեսական մասնակցության խրախուսում, ընտանեկան և գենդերային բռնության նվազեցում, կանանց առողջություն: Բացի այդ, ֆորումը նախատեսում է նաև ստեղծել մարզերում համակարգող խորհուրդներ, որոնցում ընդգրկված ակտիվ կանայք կաջակցեն ու կատարեն առաջադրված կին թեկնածուներին՝ օգնելով քաղաքակիրթ ձևով ընտրությունների անցկացմանը»,- ասաց Մխիթարյանը:

Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Սիդա ԹՈՓՈՒԶՅԱՆՆ առանձնացրեց երեք առաջնահերթ հարց, որոնք նրանք մտադիր են բարձրաձայնել նախընտրական շրջանում: «Առաջին՝ ի՞նչ քայլեր են ձեռնարկվելու մեծահասակների խնդիրների հետ կապված, մասնավորապես՝ մեծահասակ կանանց հիմնախնդիրների, չաշխատող թոշակառուների, առողջապահական, ապահովագրական հարցերի լուծման շուրջ: Այսօր հենց նրանք են համարվում ամենաանպաշտպան խավը, և նրանց համար ոչ մի պաշտոնական մեխանիզմ ձևավորված չէ: Երկրորդ՝ ունենք գենդերային հիմնախնդիրների լուծման համար ազգային մեխանիզմ ստեղծելու անհրաժեշտություն: Ի՞նչ է կատարվելու այդ ուղղությամբ: Եվ վերջապես, ընտանիքի աջակցության հայեցակարգ ստեղծելու հարցը»,- թվարկեց տիկին Թոփուզյանը:

Հանրային խորհրդի գենդերային և ժողովրդագրության հարցերի հանձնաժողովի անդամների հետ զրույցի ժամանակ նույնպես ձևավորվեց հարցերի բավական լայն շրջանակ, որոնք նրանք մտադիր են բարձրացնել: Հանձնաժողովի նախագահ և Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ Ելենա ՎԱՐԴԱՆՅԱՆԸ համարում է, որ տնտեսական ճգնաժամի հետևանքով հանրապետությունում աղքատության մակարդակի զգալի բարձրացման և սրացման պայմաններում «կանանց օրակարգը» այս ընտրություններին կունենա ավելի խիստ սոցիալական ուղղվածություն, քան 2007-ին, երբ ճգնաժամ դեռևս չկար:

«Առաջնայինը սոցիալականն է, երկրորդը՝ միգրացիայի կանխումը, ի՞նչ անել, որ երկրի քաղաքացիներն իրենց ապագան կապեն հենց իրենց, ոչ թե այլ երկրների հետ: Երրորդ՝ ինչպե՞ս բարձրացնել ընտանիքի դերը, որը հասարակության կայունության գրավականն է»,- այսպիսին է կանանց օրակարգը Ելենա Վարդանյանի ներկայացմամբ:

Նյութն արդեն պատրաստ էր տպագրության, երբ տեղեկացանք, որ **Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը** (ՔՀՀՑ), որը միավորում է «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկեր շուրջ 27 ՀԿ-ներ, պատրաստվում է դիմել կուսակցություններին՝ չստիպել իրենց ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարվել հետագայում իրենց մանդատներից, քանզի հասարակությունը ուզում է տեսնել իրեն կողմից ընտրված բոլոր կանանց Ազգային ժողովում՝ նրանք այնտեղ պետք են…

Կարծիք

«Հաղթահարել «հարեմի առաջին կնոջ» բարդույթը»

...Եթե կինը որպես բարոյական պարտք է ընդունում հասարակական իդեալին ծառայելը, ու եթե նման կինն օժտված է համապատասխան գիտելիքներով և քաղաքական հոտառությամբ ու փորձով, ապա նա պետք է լինի իշխանության մեջ՝ ձգտելով ոչ թե հարմարվել թելադրվող խաղի կանոններին, այլ դրանք հարմարեցնել իրեն: Դա երբեք միայնակ չես անի, ուստի, ինչպես ցույց է տվել համաշխարհային փորձը, կին առաջնորդները պետք է յուրացնեն առաջին կանոնը. հաղթահարել իրենց մեջ «հարեմի առաջին կնոջ» բարդույթը իշխանության տղամարդկանց էշելոններում:

«Տղամարդիկ չեն մեղավորը...»

Ես շարունակ կրկնում եմ, որ եթե առկա է կանանց հանդեպ խտրականություն, դա ամենևին էլ չի նշանակում, իբր տղամարդիկ հրաշալի են ապրում: Տղամարդիկ չեն մեղավորը, այլ այն համաստորադասության համակարգը, որն ստեղծվել է տղամարդկանց մեծ մասի կողմից: Այս իմաստով խիստ կարևոր է կանանց շարժման առկայությունը, որը գիտակցում և բացատրում է, որ ինչպես ընտանիքում, այնպես էլ պետության դեպքում բարեկեցությունը և ներդաշնակությունը կարելի է ապահովել միայն սիրո և միասնականության պայմաններում: Հասարակությունը բաղկացած է տղամարդկանցից և կանանցից, և, հավանաբար, արժի մեր խնդիրների նկատմամբ տղամարդկանց աշխարհընկալմանն ավելացնել նաև կանանցը:

Նադեժդա Շվեդովա,
քաղաքագիտության դոկտոր,
գենդերային հարցերի փորձագետ

Հարց պատգամավորին

Կին ընտրողները՝ կին պատգամավորներին

Մենք գրեթե մոռացել ենք, որ պատգամավոր բառը «պատգամ» արմատից է առաջացել: Փորձեցինք շտկել այս բացը՝ խնդրելով Երևանի և մարզերի կին ընտրողներին ձևակերպել իրենց հարցերն ու առաջարկները կին պատգամավորներին:

Նաիրա Մ., 26 տարեկան – Կուզեի, որ այս խորհրդարանում ներառվեին ավելի շատ կին պատգամավորներ, որ կանանց իրավունքներին մասին ավելի շատ խոսեին, հատկապես ընտանեկան բռնությունների մասով: Կարծում եմ՝ պետք է մշակել այնպիսի մեխանիզմ, որ ավելի խիստ պատասխանատվության ենթարկեն ընտանեկան բռնություն գործադրողին: Առաջարկում եմ նաև ընտանեկան բռնությամբ հայտնի պատգամավորները խորհրդարանում չընդգրկվեն:

Օֆելյա Ի., 35 տարեկան – Ուզում եմ, որ կին պատգամավորներն ավելի հաճախ շփվեն գյուղի կանանց հետ, նստած չլինեն այստեղ՝ Երևանում ու, խնդիրներին գործնականում ծանոթ չլինելով, որոշեն՝ ինչ պետք է արվի:

Զոյա Ա. 54 տարեկան – Կուզեի, որ կանանց համար, հատկապես ռիսկային տարիքից, մամոգրաֆիական հետազոտություններն անվճար լինեին: Թե չէ ընենց գներ են, որ մարդ վախենում էլ ա գնալ:

Անահիտ Մ., 55 տարեկան – Պետք է վերացնել սելեկտիվ աբորտները, ու դատապարտվեն այն մարդիկ, ովքեր ստիպում են, որ իրենց կանայք աբորտ անեն: Ես գիտեմ այդպիսի շատ դեպքեր, երբ ստիպել են կնոջն աբորտ անել, քանի որ արդեն երկու աղջիկ ունեն:

Արուսյակ Հ., 56 տարեկան – Հատկապես աշխատավայրում կանանց հետ կապված խտրականությանը շատ ենք հանդիպում, ավելին՝ կարող ենք տեսնել հաճախ, որ տարիքային սահմանափակմամբ են ընդունում աշխատանքի:

Շողինե Ս., 19 տարեկան – Ուզում եմ իմանալ, որ խորհրդարանում նստած են իրոք կին պատգամավորներ, ոչ թե կանայք, որոնք ամեն ինչ անում են տղամարդավարի ու տղամարդկանց կանոններով:

Իրինա Ս., 29 տարեկան – Ուզում եմ, որ կին պատգամավորները մտածեն երեխայի նպաստների ինդեքսավորման մասին: Ծնողներ կան, որոնց եկամուտների մակարդակը բավական բարձր է, և երեխայի նպաստը նրանց ընտանեկան բյուջեում մեծ դեր չի խաղում: Սակայն ինչ-որ մեկի համար էլ դրանք բավական լուրջ գումարներ են, և արդարացի կլիներ, եթե նրանց երեխայի նպաստների չափը առավել ունևոր քաղաքացիների հաշվին ավելանա: Այսօր շատ կարևոր է նաև փոխհատուցման գումարներ վճարել հաշմանդամություն ունեցող երեխաներին և այն երեխաների համար, որոնց մանկատներից են վերցրել:

Անժելա Ռ., 57 տարեկան – Շատերը կհիշեն այն բողոքի ակցիան, որ անցկացրեցին հղի կանայք՝ իրենց նպաստների կրճատման համար: Այս փաստը մեկ անգամ ևս մեզ համոզեց, որ խորհրդարանում կնոջ դերը պակաս կարևոր չէ, հատկապես սոցիալական հանձնաժողովում, որն ընդունեց օրենքը, որի կազմում, չգիտես ինչու, կին չկար:

Սուսաննա Ս., 31 տարեկան – Կին պատգամավորը պետք է դրսևորի իր ողջ իմաստությունն ու վճռականությունը, որպեսզի կասեցնի աղանդների գործունեությունը, մասնավորապես, «Եհովայի վկաներին»: Մեր դպրոցներում կան ուսուցիչներ, որոնք առանց թաքցնելու՝ այս աղանդի հետևորդներ են և ազատ քարոզում են մեր երեխաների շրջանում: Դա անընդունելի է: Ու մի բան էլ. վատ չէր լինի քննարկել մի այնպիսի ոչ պակաս կարևոր քայլ, ինչպիսին դպրոցների և մանկապարտեզների շենքերի վերանորոգման ֆինանսավորման էական ավելացման հնարավորությունն է:

Նորա Ա., 67 տարեկան – Շատ հաճախ խանութներում և նույնիսկ հայտնի սուպերմարքեթներում կարելի է տեսնել ժամկետանց մթերքներ: Դրանք հիմնականում կաթնամթերքներ են կամ պահածոներ: Մի անգամ մենք ընկերուհիներով որոշեցինք, որ վատ չէր լինի ստեղծել մեր, այսպես կոչված, «փորձագետների ակումբը» և պարզել խանութներում հին և ժամկետանց արտադրանքը: Ու այդ ժամանակ մեզնից՝ թոշակառուներից պետությանը մի օգուտ կլինի: Այ եթե միայն օրինականացնեին մեր նախաձեռնությունը: Ի՞նչ կասեք, պատգամավոր տիկնայք:

Արմենուհի Ս., գյուղ Դարբաս - Ե՞րբ կկարողանաք բարելավել կին գյուղացու ապրելակերպը, որ նա կարողանա մի քիչ լավ ապրել: Ե՞րբ կարող ենք մեր մշակած ապրանքը ժամանակին վաճառքի հանել:

Ես ուրախ եմ, որ կանայք այդքան ակտիվ են ու զբաղվում են քաղաքականությամբ, որովհետև, իրոք, միայն կինը կարող է հասկանալ կնոջ հոգսերի ողջ ծանրությունը:

Վերա Գ., գյուղ Օշական – Շատ մեծ համակրանք ունեմ կին քաղաքական գործիչների նկատմամբ: Կարծում եմ՝ կանանց մուտքով խորհրդարան կլուծվի սոցիալական խնդիրը: Փորձը ցույց է տալիս, որ այն գյուղերում, որոնց գյուղապետները կանայք են, այդ համայնքները ավելի քիչ չլուծված խնդիրներ ունեն:

Հայկանուշ Ե., գյուղ Ակնաշեն – Ես ջերմոց ունեմ: Մենք ողջ տարի չարչարվում ենք, բանջարեղենը մշակում ենք, աշխատատեղ ենք ստեղծում: Բերքը, շուկա հասնելու ժամանակ, դրսից, չգիտեմ ինչ ճանապարհով, ցածր ինքնարժեքով բանջարեղեն են ներկրում, և արդյունքում մերը մնում է: Մեկ-երկու տարի այսպես որ աշխատենք, կփակենք մեր ջերմոցը, տանը կնստենք:

Ես ուզում եմ, որ որևէ հսկողություն լինի, և ինչպես կարելի է անել, որ այս երկրում փոքր բիզնես ունեցողը նույնպես կարողանա շահույթ ստանալ:

Էջը պատրաստեցին
Լիլիթ Քոչինյանը,
Նինել Հովհաննիսյանը,
Մարիամ Մուղդուսյանը,
Կարինե Ամիրխանյանը

USAID FROM THE AMERICAN PEOPLE
COUNTERPART INTERNATIONAL

Այս համարի հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության պայմանագրերի շրջանակներում, ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի միջոցով:

Համարում զետեղված նյութերի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ ՄԶԳ և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ: